Ա. ՔԵՉՅԱՆ

(Ա. Լաարանի ուսանող)

ՄՀԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

(Մտապատկեր)

Ուսավոր դասարանում, յուրահատուկ հանդարտությամբ, շրջանակավոր ակնոցների միջից փայլող աչքերով, գրականության առաջիկայի դասատուն նայում էր իր վրա բևեռված երկու տասնյակ ուսանողների հայացքներին։

Դասարանում հնչում էր նրա դուրեկան, յուրաքանչյուր բառը դրոշմող ձայնը.

— Հայ ժողովուրդն իր ապագայի նկատմամբ ունեցել է պայծառ լավատեսություն։ Այդ լավատեսության գեղեցկագույն արտահայտությունը Փոքր Մհերն է, մեր դյուցազունների սերնդի վերջին ներկայացուցիչը, որը, գայրացած աշխարհի անարդարություններից, քաշվել է քարայր և որոշել դուրս գալ այնտեղից միայն այն ժամանակ՝

«Երբոր աշխարհ ավերվի՝ մեկ էլ շինվի,
Երբոր ցորեն լինի քանց մասուր մի,
Ու գարին լինի քանց ընկուզ մի...»։

Սմբատը լարված ուշադրությամբ լսում էր իր սիրելի ուսուցչին։

Դասից հետո տուն վերադառնալով, նա նորից ծայրեծայր կարդաց Փոքր Մհերի դյուցազնավեպը, վառ խորհրդածություններով գլուխը թեքեց գրքի վրա և թաղվեց պատկերների աշխարհում . . . . . .

Նրա առջև բացվեց Արարատյան դաշտավայրի գեղեցիկ այգաբացը, երբ գիշերից պոկվող և մթնշաղի մեջ պարուրված լեռ ու դաշտ, քաղաք ու գյուղ աստիճանաբար գծագրվում են հորիզոնի վրա, որպեսզի քիչ հետո շողան արշալույսի ծիրանագույն շողերի ներքո։

Այն ճանապարհի վրա կանգնած է ինքը։ Արայի լեռան ստորոտից փչող մեղմ հովը խաղում է նրա խարտյաշ գանգուրների հետ։ Նայում է նա Արարատի ձյունափայլ գագաթին, որի վրա ընկել են արեգակի առաջին ճառագայթները։ Հեռվում, այգիների հետևում, լսվում է տրակտորի զրնգոն ձայնը, իսկ ճանապարհի երկու եզրերին վեր սլացած արդեն դեղնականաչ բարտիների կատարներին թռչկոտում են քնից արթնացած թռչունները։

Կանգնել է ինքը ճանապարհի եզրին, ու հմայված, շնչում է աշնանային առավոտյան բույրը։ Եվ ահա Զվարթնոցի ավերակներից դեպի իրեն է մոտենում երկաթյա զրահ հագած մի հսկա ծերունի։

— Բարյավ, երիտասա՛րդ, կարո՞ղ ես ասել թե ո՛ր երկրում եմ գտնվում ես։

— Հայաստանում,— մեքենայորեն պատասխանում է ինքը զարմացած։

— Ամոթ է խաբելը,— ասաց ծերունին,— ե՛ս էլ Հայաստանցի եմ, բայց իմ ճանաչած Հայաստանը երբե՛ք այսքան այգիներ, բարեկարգ ճանապարհներ, կանաչապատ գյուղեր, հոյաշեն տներ չի ունեցել։ Բացի այդ, քիչ առաջ տեսա ես երկաթե շարժվող մի հրեշ-հսկայի, որն անցնում էր հողի վրայով և գետինը նրան հենակ էր տալիս, իսկ Հայաստանի հողը, որը ես գիտեմ, անարդարության երեսից այնքա՞ն էր փոշիացել ու փխրացել, որ ոտներս թաղվում էին նրա մեջ։ Ո՛չ, ո՛չ, սա ուրիշ երկիր է, որդյա՛կ։

— Բայց պապի՛կ, մի՞թե դու չես տեսնում քեզ նման ալեհեր գլուխ ունեցող, քո աջ ու ձախ կողմերում խոյացած Արարատը և լայնանիստ քառագագաթ Արագածը,— ասաց նա է՛լ ավելի զարմացած։

Ծերունին ակնապիշ նայեց Արարատին և Արագածին, ու զարմացած, բացագանչեց.

— Իրոք նրանք են։ Ես դուրս եկա գիշերով ու ճիշտ կողմնորոշվեցի։— Իվ արտասուքի երկու շիթ իջավ ծերունու ձյունահեր մորուքի վրա։

— Ուրեմն փոխվե՞լ է իմ աշխարհը,— ասաց ծերունին հազիվ լսելի ձայնով։— Դարեր առաջ, երբ ես այստեղ էի, իմ սիրելի ժողովուրդը տառապում էր բռնակալության անարդար լծի տակ։ Ես սիրում էի ժողովրդին, սիրում էի անսահման սիրով, ուստի և չկարողացա տանել նրա ողբն ու տառապանքը... Վշտացած ու դառնացած, հեռացա կյանքից ու փակվեցի քարայրում։ ... Ու սպասում էի, սպասում ու հավատում էի թե կգան լավ օրեր...

— Բայց ո՞վ ես դու, պապի՛կ, և ո՞ր աշխարհից ես գալիս,— հարցրեց նա՝ հուզված ծերունու պատմությունից։

— Դավթի որդի Մհերն եմ, որդի՛ս, Սասունցի՛, և գալիս եմ իմ քարայրից...

Նա ջերմորեն փարվեց Ծերունուն։

— Ների՛ր ինձ, իմաստո՛ւն Ծերունի, չճանաչեցի։ Ես հաճույքով կպատմեմ քեզ մեր նոր երկրի մասին, քո սիրելի ժողովրդի մասին, կպատմեմ և կառաջնորդեմ քեզ ամենուրեք։ Դու կտեսնես ավելին, քան երազել ես դարեր առաջ։ Եվ դու կհամոզվես, որ այդ երազ չէ, այլ քաղցր իրականություն։ Քայլի՛ր, քայլի՛ր ինձ հետ։

Նրանք դանդաղ քայլեցին հայելանման ասֆալտապատ ճանապարհով։

Արևն արդեն բարձրացել էր։

Վիթխարի Ծերունին առույգ պատանու նման քայլում էր և մերթ ընդ մերթ դուփում էր հսկա ոտն հողին և ժպտում մանկան պես։

— Ո՛չ, Է՛լ չի թաղվում, ամուր և հաստատուն է Հայրենի հողը...

Ծերունին զարմացական հայացքով դիտում էր իր շուրջը, դիտում էր ճանապարհի վրայով ծիծեռնակի արագությամբ սլացող գեղեցկատեսիլ «պոբեդա»ները, «մոսկվիչ»ները, ամեն տեսակ բարիքներով բեռնված ապրանքատար ավտոմեքենաները...

Նա ուշադրությամբ լսում էր երիտասարդի զրույցը Սովետական Հայաստանի մասին, Սովետական Մեծ Միության մասին, ժողովուրդների եղբայրության մասին... այն ամենի մասին, ինչը կարող էր հետաքրքրել իր ժողովրդի փրկության և ազատության համար պայքարող ու երազող հայրենասերին։

— Երեսուն տարի է, որ գոյություն ունի Սովետական Հայաստանը, բայց կարճ ժամանակամիջոցում մենք երկիրը փոխել ենք հիմնավորապես։

— Քրտինք թափող մարդիկ պատվի մե՞ջ են,— ընդհատելով երիտասարդին հարցրեց Ծերունին։

— Ամենամեծ պատիվը նրա՛նցն է. աշխատավորներն իրե՛նք են մեզ մոտ կառավարում երկիրը, իրե՛նք են տնօրինում իրենց բախտը։

— Իսկ ցորենն ի՞նչպես է, մատուրի չափ կա՞...

— Ցորենն այժմ ավելի եկամտաբեր է քան մատուրը։ Մեզ մոտ այժմ ցորենի բազմաճյուղ տեսակներ կան. ցանեցիր մեկ անգամ՝ կհնձես մի քանի տարի, ինչպես առվույտը։

Նրանք զրուցելով աննկատելիորեն մոտենում էին Երևանին՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքին։

Վարդագույն, բազմահարկ տների լուսամուտների ապակիները շլացուցիչ փայլում էին արևի տակ։ Գործարանների հսկա ծխնելուզներից կապուտակ երկնքին էր հասնում թանձր, կապտավուն ծուխը։

Ահա՛ և քաղաքը։

Հրաշալիքների մի ամբողջ շարան։

Մհերն իր խոշոր և սև աչքերը սևեռած, ամբողջ զորությամբ աշխատում էր ընդգրկել շրջապատը՝ պողոտաներ, գործարաններ, պուրակներ, հրապարակներ, շենքեր, սլացող տրամվայներ, տրոլեյբուսներ, ավտոմեքենաներ...

— Հիանալի՜ է, հիանալի՜... Ի՜նչ սքանչելի ու տպավորիչ են մարդիկ, հայրենակիցներս... Ո՛չ, նրանք այն չեն, ինչ ես տեսել եմ, նրանք անճանաչելի աստիճանով փոխվել են...

Ամեն մի քայլափոխում հսկայի զարմանքն ավելի ու ավելի էր մեծանում։ Եվ վերջապես այդ զարմանքն աննկատելիորեն փոխվեց հիացմունքի դեպի այն հրաշագործ սերունդը, որը ստեղծել, աճեցրել ու կառուցել էր այս հրաշալիքները, այս հեքիաթային աշխարհը։

Երիտասարդը Մհերին ջերմորեն պատմեց ո՛չ միայն Երևանի, այլև Հայաստանի մյուս քաղաքների՝ Լենինականի, Կիրովականի, Ալավերդու, Ղափանի, Էջմիածնի, կոլխոզային շքեղ գյուղերի, ագրոքաղաքների, ջրանցքների, էլեկտրակայանների, ճանապարհների մասին։

Եվ այսպես խոսելով, նրանք հասան Լենինի հրապարակը։ Նա Մհերին ցույց տվեց անմահ Լենինի հոյաշեն արձանը և քաղաքի բարձրադիր վայրում հաղթականորեն դեպի երկինք բարձրացած ՍՏԱԼԻՆԻ մոնումենտը և ասաց.

— Նրանք երկուսով փրկեցին, պապի՛կ, մեր ժողովրդին։ Հայ ժողովրդի ամենածանր օրերին, նրանք մեկնեցին իրենց ազատարար ձեռքը և հայրական հոգատարությամբ ու սիրով մեզ բարձրացրին անկման վիհից դեպի ազատ, լուսավոր կյանք։ Նրա՛նք տվեցին մեզ այս լուսաշող ներկան։ Նրա՛նք բերեցին քո երազած խաղաղությունը։

— Բայց մի՞թե դեռ աշխարհում կան մարդիկ, որոնք խաղաղություն չեն սիրում։

— Այո՛, կան։ Նրանք գտնվում են Արևմուտքում և Ատլանտյանից այն կողմ։ Նրանց երկրներում ազատությունն ու արդարությունն ավելի հաստ պարիսպների մեջ են բանտված, քան այն ժամանակ, երբ դու քարայր մտար։

Ծերունին մի պահ մռայլվեց, ապա ասաց դող ձայնով.

— Հայ ժողովուրդը, իր պատմության ապարեզ իջնելու օրից, սիրել է խաղաղությունը, եղբայրությունը և ազատությունը։ Անցյալում իմ տեսած անարդար և արյունոտ աշխարհում, այդ գաղափարները հարգի չէին, այն ժամանակ բռնակալների ու հարստահարողների վայրենի կամայականությունն էր գերիշխում։ Այժմ տեսնում եմ, որ քանդվել է, իրոք, հին աշխարհը և նորն է շինվել... Եվ եթե կան, ինչպես ասում ես, ինչ որ տեղերում հին աշխարհի բեկորներ, ապա նրանք անկարող են կասեցնել պատմության անխիվի ընթացքը։

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ռեսպուբլիկայի ողջ աշխատավորության հետ միասին Սովետական Հայաստանի 30-րդ տարեդարձը պատշաճ ձևով նշեցին նաև Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի ուսանողությունն ու դասախոսները։

Տոնակատարության օրը, երեկոյան ժամը 8-ին, նախապես զարդարված ճեմարանի դահլիճը հավաքվեցին ուսանողությունը, դասախոսները, միաբանության անդամներից ոմանք և Էջմիածնից ու մայրաքաղաքից եկած հյուրերը։ Հինգ րոպե անց դահլիճ մտավ Նորին Սուրբ Օծություն Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Գերապատիվ Վահան Արքեպիսկոպոս Կոստանյանի, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ. Կամսարականի և ճեմարանի վերատեսուչ տիար Մ. Մինասյանի։

Տոնական հանդեսը աղոթքով բացեց Գերաշնորհ Վահան Արքեպիսկոպոսը։

Առաջինը բեմ բարձրացավ Հոգևոր ճեմարանի վերատեսուչ տիար Մինաս Մինասյանը և դրվատեց այն վիթխարի հաջողությունները, որ ունեցել է հայ ժողովուրդը Սովետական կարգերը Հայաստանում հաստատվելու շնորհիվ։

Տեսչից հետո հանդես եկավ Գ. Լսարանի շնորհալի ուսանող Քաջիկ սարկավագ Գեորգյանը և կարդաց իր շարադրությունը՝ «Սովետական Հայաստանը 30 տարում» թեմայով։

Ի պատիվ Սովետական Հայաստանի պանծալի հոբելյանի, Հոգևոր ճեմարանի երգչախումբը, ղեկավարությամբ արվեստի վաստակավոր գործիչ Դ. Ղազարյանի, որը Հոգևոր ճեմարանի երաժշտության դասախոսն է, երգեց «Անուշ Հայաստան» երգը։

Այնուհետև, իրար հետևից, հանդես եկան ճեմարանի մի շարք շնորհալի ուսանողներ իրենց արտասանություններով։ Ա. Լսարանի ուսանող Արամ Քեչյանը արտասանեց Գեղամ Սարյանի Սովետական Հայաստանին նվիրված բալլադան, Գ. Լսարանի ուսանող Փայլակ Այնթափյանը, որն օժտված է բանաստեղծական տաղանդով, կարդաց իր երկու ինքնուրույն բանաստեղծությունները, Գ. Լսարանի ուսանող Իգնատիոս սարկավագ Մարտիրյանը կարդաց իր հեղինակած «Ողջույն Սովետական Հայաստանին» արձակ բանաստեղծությունը, Բ. Լսարանի ուսանող Տիգրան Մարտիկյանը կարդաց իր ինքնուրույն բանաստեղծությունը՝ «Սովետական Հայաստան»։ Ելույթ ունեցան այլ ուսանողներ ևս։

Ամեն մի արտասանությունից հետո, Հոգևոր ճեմարանի երգչախումբը երգում էր հայկական երգեր։ Արտասանությունները և երգերը ընդունվում էին ունկնդիրների կողմից ծափահարություններով։

Երեկույթի վերջում երկրորդ անգամ հանդես եկավ Փայլակ Այնթափյանը և կարդաց իր շարադրությունը՝ «Սովետահայ պոեզիան 30 տարում»։

Ստեփան սարկավագը իր անուշ ձայնով երգեց հայկական մի քանի երգեր։

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի կողմից ողջույնի խոսք ասաց Ֆ. Բոռչանյանը։

Վերջում Վեհափառ Հայրապետն օրհնեց հանդիսականներին և հանդեսը փակվեց։

Հանդեսից հետո Հոգևոր ճեմարանի երկրորդ հարկի դահլիճում տրվեց թեյասեղան։

Ֆ. Բ.

— Հայ ժողովուրդը, իր պատմության ապարեզ իջնելու օրից, սիրել է խաղաղությունը, եղբայրությունը և ազատությունը։ Անցյալում իմ տեսած անարդար և արյունոտ աշխարհում, այդ գաղափարները հարգի չէին, այն ժամանակ բռնակալների ու հարստահարողների վայրենի կամայականությունն էր գերիշխում։ Այժմ տեսնում եմ, որ քանդվել է, իրոք, հին աշխարհը և նորն է շինվել... Եվ եթե կան, ինչպես ասում ես, ինչ որ տեղերում հին աշխարհի բեկորներ, ապա նրանք անկարող են կասեցնել պատմության անխիվի ընթացքը։

Եվ ծերունին շարունակեց.

— Ես խոնարհվում եմ նոր սերնդի, նոր հասարակարգի ստեղծագործ ուժի առաջ, և իմ երախտագիտական պարտքը հատուցանելու համար, համբուրում եմ մոնումենտները իմ ժողովրդի փրկիչների, այն մարդկանց, որոնք երախտագետ հայ ժողովրդին ազատություն և երջանիկ կյանք պարգևողներն են հանդիսացել . . . . . .

Սմբատը սթափվեց։ Պատկերն անհետացավ։

Նրա դեմքը փայլում էր երջանկությունից։